

## 68. ՀՈԳԵԱՌԸ

Մին մարթ առանց զոնաղ հաց շար օտում։ Մին օր շատ եշում  
ա, եշում, տըսնում, վըեր տոնը մարթ լի կյամ, խուզինը օսուքն  
ա քցինմ, տանան տոնս կյամ, հղե ինհինմ, վըեր քյինա տըսնա  
հիշտե՞ղ ա մարթ պտահում, հանցու վըեր նհետը նստե, հաց օտե:  
Շատ ա քյինամ, թա խրեզի, մին ըխպըրու զրադ ա տոնս կյամ։  
Շատ սուլըծացած ա ինհինմ, օգում ա լիհա վըեր նստե հաց օտե,  
բուրդան հրիշտրանկը տոնս ա կյամ տրա առաջր։ Տա խիլլա վա-  
խում ա: Հրիշտրանկն ասում ա.—Վախումիլ, ես քու ախպըրեր ըմ:  
Էտ մարթը թա՝ ես ախպըրեր չօնեմ։ Հրիշտըրանկը ասում ա.—Եկալ  
ըմ, վըեր քեզ մին պեմ ասեմ։ Մինչեւ կյանքետ վերշը փրսակվես-  
վուշ, վըեր փրսըկվեցեր, հենց առաշին օրը մըռնըլական ըս։ Ա-  
սում ա, քյինամ։ Էտ մարթը մտածում ա, մտածում, ետնան էլ թա՝  
դի հինչ պիտի անեմ, օզած-չօզած պիտի փսակվեմվուշ։ Էտ խոս-  
կը ըսկանալան ետը տա կլնիս ա յոր օնում, ինգլում ծըմըկնեն,  
ասում ա վըեր ետ քյինամ տոն, իմ հմըր, իմար, պարեկամնես,  
հնգերունքս յիրա յըն առոնըլական ըստիրին, վըեր փսակվեմ։ Տա  
էմըկներումը կենում ա, շորերը լոխ ճղորտվում ա, իրեսը մզրկա-  
լում։

Մին օր էրկու ըստրաժնիկնե տոնս ըն կյամ տրա առաշը,  
տրա յիրա կդնըլում, ասում։—Թաքավըրերը մըեռալ ա, ժուղո-  
վուդթը լոխ հըվաքվում ըն, վըեր թաքավըեր ճոկեն, տու ըստըեղ  
հինչ ը՞ս անում։ Էտ մարթին փռնում ըն, տանում թաքավըերեն  
պըլատեն ըոքչին մին գոնզ տըեղ։ Տա եշում ա, տըսնում ժուղո-

էլ թաքավը ըն տինեական։ Տա վը եր եշում ա, տըեսնում լոխ  
 լավ կյեցված մըեծ-մըեծ պաշտոնու մարթիքյ, ինքին էլ ճղորտված  
 շուրերավ, հըմընշիլան մին դրադ տըեզ կուզոռ ա անում։ Դուշը  
 պեց ըն թողում, թուշ կյամ ա տրա կլիսն վը եր կյամ։ Հըվագված  
 մարթիքյ ասում ըն թուղեցեքյ ուադ ինի, տրանա թաքավը ըն չի  
 ինիլ, Դուշը նորից ըն պեց թողում, էլլա յա կյամ տրա կլիսն  
 վը եր կյամ։ Ժուղովուրթին ասում ըն։—Հալբաթ սրանում մին հի-  
 նար կա, մին պեն կա, վը եր դուշն իրեք դննում էլ սրա կլիսն ա  
 վը եր կյամ։ Պիրում ըն տրան թաքավը եր տինում, տանում հա-  
 մամ, լըղընում, իրեսը վը եր անում, շորերը փոխում, թաքավը-  
 րեն ըխնըկանը նհետ փսակում։ Սուրթան ուրժունը վը եր տա  
 պիտի կնգանը նհետ անց կըցընե, զասիդանա յըտըցնում ա, շը-  
 լըմովի յա անում, կնեգլն էլ թա՝ տըեսնում ըմ, վը եր մին դարդ  
 ոնես, ասում լըս, ասե, տըեսնամ հի՞նչ ա պըտահալ։ Տա թա  
 քանա հի՞նչ կիեղեմ, հրիշտրանկը իստի պեն ա ասալ։ Կնեզը թա՝  
 հըսըրինեն հունց պընդըցրած ա, պահակինեն հունց վըննը կացած  
 ըն, վը ել մին հրիշտրանկ կարել չի մուտանա։ Տա լիհա շորերը  
 հանում ա, վը եր նի մննե տըեղը, հրիշտրանկը կյամ ա կոխիկն  
 վըննը կենում, թա պա քեզ հի՞նչ ըմ ասալ։ Էտ մարթն ասում  
 ա։—Լա՛վ, սըխալվալ ըմ։ Հրիշտրանկը թա՝ դի վը եր սըխալվալ ըս,  
 նելլ ըրա հոքիտ տո, վը եր տանեմ։ Տա թա՝ պա իմ ախոպը ըր չը՞ս,  
 թոդ լիհա աղոթկ անեմ պրծնեմ, ետնան էլլա հոքիս առնում ըս,  
 առ Հրիշտրանկը թա քըեզ քսան մնուտ ժամանակ ըմ տամ, մենակ  
 տու լըս, օրիշ տըեղ էլ պիտի քըինամ։ Տա ուրան աղոտկը շատ  
 էրկան ա անում, հրիշտրանկը միշտ թայդի յա տամ, թա նելլ ըրա,  
 տա յըտըցնում ա Վերլը, հրիշտրանկը տըեսնում ա, վը եր շատ  
 յըտանում, ճարը կտրած, թողում ա, քիինամ, էտ մարթին ա-  
 սում։—Խսկական, հրիշտրանկը էս դննում տու տըեռեր, հիշքան օ-  
 պում ըս, ապրի։

